[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Սեպտեմբեր	2018 թ.		Բ	9485391622
[4] Մատուցման ամսաթիվը					
13	Սեպտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	3	6	7	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ				N 2470103343210000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	N 900011000834							
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծավալամասերը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 22150317 քր գործով դատահաշվապահական փորձաքննություն	հատ	1	300000		300000
Ընդամենը						300000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրություն, անուն, ազգանուն)

13/09/2018 14:38:14

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Digitally signed by GRIGORYAN NAREK 1514930757
Date: 2018.09.13 14:42:58 MSK

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

/դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին/

« 19 » դեկտեմբերի 2017թ. **գ. Ախուրյան**

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության կապիտան՝ Ս.Օ.Մինասյանս, քննարկելով վարույթիս թիվ 22150317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գյումրի քաղաքի բնակչուհի Աննա Ոսկանյանը Շիրակի մարզի դատախազին հասցեագրված դիմումով հայտնել է, որ 2004 թվականի օգոստոս ամսից որպես դասվար աշխատանքի է գործուղվել Շիրակի մարզի Գառնարիճ համայնքի միջնակարգ դպրոցը, իսկ հիշյալ դպրոցի տնօրեն Նաիրա Աղվանի Աբրահամյանը, լիազորությունները չարաշահելու միջոցով, յուրացրել է իր աշխատավարձի և գործուղման վարձավճարները:

Դիմումի առթիվ ՀՀ ոստիկանության Ամասիայի բաժնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստմամբ պարզվել է, որ Նաիրա Աբրահամյանը, 1997 թվականից աշխատելով Գառնարիճ համայնքի միջնակարգ դպրոցում որպես տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում, շահադիտական դրդումներով, Աննա Ոսկանյանի փաստացի աշխատած ժամանակահատվածի և գործողումների վերաբերյալ մտցրել է կեղծ տեղեկություններ, որից հետո հիշյալ տեղեկագրերը ներկայացրել վճարման և Աննա Ոսկանյանի անվամբ ելքագրված խոշոր չափի՝ 1.872.455 դրամը գումարը յուրացման եղանակով հափշտակել:

2017 թվականի փետրվարի 13-ին Աննա Ոսկանյանի դիմումի առթիվ նախապատրաստված նյութերով հարուցվել է 22150317 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 314-րդ հոդվածի 1-ին մասով և նախաքննության կատարման համար ուղարկվել Շիրակի մարզային քննչական վարչություն:

Որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Նախաքննության ընթացքում որոշում է կայացվել Աննա Ոսկանյանին որպես տուժող ճանաչելու մասին և հարցաքննվել է:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննվել են Գոհար Մանվելի Ղազարյանը, Մանվել Արտավազդի Ղազարյանը, Վարդանուշ Սերգեյի Բաղիշյանն, Արմենուհի Աղասու Բաղիշյանը, Երազիկ Էնգելսի Աթոյանը, Գարեգին Մարտունի Դիլանյանն, Աննա Արտակի Բաղեյանը, Մարիամ Ավետիսի Թորոսյանը, Վանիկ Ռուբիկի Մանուկյանը, Սաթիկ Գարեգինի Դիլանյանն, Արուսյակ Աղվանի Աբրահամյանը, Գևորգ Սամվելի Սարիբեկյանն, Էդգար Գևորգի Ամիրյանը, Ժորա Արզումանի Պապոյանը, Նաիրա Վարդգեսի Աբրահամյանը, Նաիրա Աղվանի Աբրահամյանը, Լուսինե Մանվելի Ղազարյանը, Հերմինե Մանվելի Ղազարյանը, Հուրիկ Քերոբի Մանուկյանն, Արուս Հարությունի Գրիգորյանը, Յաշա Նիկոլայի Ոսկանյանը, Անահիտ Հարությունի Պապոյանը, Վարդանուշ Գալուստի Տեր-Հովհաննիսյանը, Նազելի Սոսի Մուրադյանը, Արմենուհի Գոռի Սարգսյանը, Անի Գոռի Սարգսյանը:

Հետազոտման համար ստորագրության նմուշներ են ստացվել Աննա Ոսկանյանից, Նաիրա Աբրահամյանից և Արուս Գրիգորյանից:

«Գառնառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ից առգրավվել են 2004 թվականի մարտի 1-ից 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում տաբելի վարման

մատյանները, աշխատավարձեր հաշվելու համար տնօրենի և հաշվապահի կողմից կազմված տաբելները, հաստիքացուցակները, Շիրակի մարզպետարան ներկայացրած հաշվետվությունները, աշխատավարձի, ավանսի, գործուղումների և այլ վճարումների ցուցակները, Աննա Ոսկանյանի, Թամարա Թովմասյանի, Ֆլորա Տեր-Հովհաննիսյանի, Նաիրա Աբրահամյանի, Ժոռա Պապոյանի, Լուսինե Ղազարյանի աշխատանքային անձնական գործերը և 2004 թվականի մարտի 1-ից 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի հրամանագրքերը:

20.05.2017թ. նշանակել է դատաձեռագրաբանական փորձաքննություն, որի եզրակացությունը մինչ օրս չի ստացվել:

Գրություններ են ուղարկվել ՀՀ կրթության և գիտության նախարարություն, «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, «Արդշինբանկ» ՓԲԸ, ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն և ստացվել պատասխանները:

Գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն՝ պարզելու, թե «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները ՊՈԱԿ-ում աշխատած ժամանակահատվածում ՀՀ սահմանը հատել են, թե ոչ, եթե այո, ապա երբ, որ սահմանային կետով, որի պատասխանը ստացվել է:

Զննվել է «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հրամանագիրքը և աշխատակիցների սահմանահատության պատմությունները, որոնց արդյունքում պարզվել է, որ մի շարք աշխատակիցները աշխատանքային օրերին բացակայել են ՀՀ-ից:

18.12.2017 թվականին «Հույս և օրենք» ՍՊ ընկերությունից գրություն է ստացվել այն մասին, որ քրեական գործով նշանակվելիք դատահաշվապահական փորձաքննությունը կիրականացնի «Հույս և օրենք» ՍՊ ընկերության աշխատակից Նարեկ Հակոբի Գրիգորյանը:

19.12.2017 թվականին որոշում է կայացվել «Հույս և օրենք» ՍՊ ընկերության աշխատակից Նարեկ Հակոբի Գրիգորյանին փորձագետ ճանաչելու մասին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ և 244-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 22150317 քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Հույս և օրենք» ՍՊ ընկերության աշխատակից՝ փորձագետ Նարեկ Հակոբի Գրիգորյանին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ 2008 թվականից մինչև 2017 թվականը «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը գործունեություն ծավալել է ՀՀ-ում ոլորտը կարգավորող, գործող օրենսդրության համաձայն, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել, երբ և ում կողմից,

բ/ 2008 թվականից մինչև 2017 թվականը «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ֆինանսական խախտումներ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել, երբ, ում կողմից, ինչ չափով, դրանց արդյունքում պետությանը կամ կազմակերպությանը վնաս պատճառվել է, թե ոչ,

3. Փորձաքննության անցկացման համար անհրաժեշտության դեպքում փորձագետին կտրամադրվի քրեական գործը և Շիրակի մարզի «Գառնառիճ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ից առգրավված փաստաթղթերը:

Ավագ քննիչ՝ **Ս.Օ.Մինասյան**